Հաստատված է

ՀՀ կրթության և գիտության
նախարարի

«15» 04 2011թ.

№341-Ա/Ք հրամանով

Ա. ԱՇՈՏՅԱՆ

Տպագրված է ընդամենը 3 օրինակ

օրինակ 2

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության

իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի Կենտրոնական շրջանի ---------- ի տարածքային

բաժնի կողմից «16» 10 2007թ.

գրանցման թիվ 222.210.00822

Վկայական 034077882
002-3

թիվ ___ փոփոխությունը գրանցված է

իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի

Կենտրոնի տարածքային բաժնի կողմից

«26» 04 2011թ.

տ/բ պետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի թիվ 199-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական ճարտարագիտական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (այսուհետ՝ կանոնադրություն) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության «Ընդհանուր դրույթներ» բաժնի 1-ին կետի 1-ին պարբերությունում «Երևանի պետական ճարտարագիտական քոլեջ» բառերը փոխարինել «Երևանի տարածաշրջանային N 1 տարածաշրջանային քոլեջ» բառերով:

2. Կանոնադրության «Ընդհանուր դրույթներ» բաժնի 7-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

Քոլեջի լրիվ անվանումն է՝

հայերեն՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի տարածաշրջանային N 1 պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ռուսերեն՝ Государственная некоммерческая Организация "Ереванский региональный государственный колледж N 1" Министерства образования и науки Республики Армения

անգլերեն՝ "Yerevan regional state college N 1" state noncommercial organization of the Ministry of Education and Science of Republic of Armenia.

Սույն փոփոխությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական ճարտարագիտական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (գրանցված ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 16.10.2007թ.) անբաժանելի մասը:

6-3-8

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
ՀՀ կրթության և գիտության
նախարարի
«06» 09 200 -ի
N 790-Հ հրամանով

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ

Կազմված է 05.09 2007թ.
բաղկացած է 11 թերթերից.
Տպագրված է ընդամենը 5
օրինակ
Օրինակ 2
Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կենտրո
նական մարմնի կողմից
16.10.2007 թվականին
Գրանցման համար 222.210.00822
Գրանցման վկայական 034 077882
Իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործա
կալության ղեկավար՝
Մ. Մարտիրոսյան

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## Ի.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Երևանի պետական ճարտարագիտական քոլեջ պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Քոլեջ) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություն է:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Երևանի պետական ճարտարագիտական քոլեջը գրանցման համար ) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Երևանի պետական էլեկտրատեխնիկական քոլեջի (գրանցման համար 264.210.05994 ) և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Երևանի թիվ 2 արհեստագործական ուսումնարանի (գրանցման համար 264.210.06077) միաձուլվելու արդյունքում և հանդիսանում է նրանց իրավահաջորդը:

2. Քոլեջն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Քոլեջի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

4. Քոլեջը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Քոլեջը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Քոլեջն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

6. Քոլեջն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով ու իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր:

7. Քոլեջի լրիվ անվանումն է՝

հայերեն՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական ճարտարագիտական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ռուսերեն՝ Государственная некоммерческая организация „Ереванский государственный инженерный колледж'' Министерства образования и науки Республики Армения

անգլերեն՝„Yerevan State Enginering College'' state non-commercial organization of the Ministry of Education and Science of Republik of Armenia.

8. Քոլեջի գտնվելու վայրն է՝ 375014, ք. Երևան Թբիլիսյան խճուղի 3/1

9. Քոլեջն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

## II. ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

10. Քոլեջի գործունեության հիմնական առարկան և նպատակներն են.

ա) հասարակական կյանքի տարբեր ոլորտների համար պետական կրթական չափորոշիչներին համապատասխան միջին, նախնական մասնագիտական (արհեստագործական) որակավորմամբ կադրերի պատրաստումը, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու քաղաքացու համակողմանի ձևավորումը.

բ) անհատի մասնագիտական կրթության, նրա հոգևոր ու ֆիզիկական զարգացման պահանջմունքների բավարարումը.

գ) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ծրագրերի (հիմնական և լրացուցիչ) իրականացումը.

11. Քոլեջը կարող է իրականացնել հետևյալ ձեռնարկատիրական գործունեությունը՝

1. միջին մասնագիտական կրթություն.
2. նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն.
3. կրթություն մեծահասակների համար, և ուրիշ կարգերում չներառված այլ կրթություն.
4. հրատարակչական գործ.
5. կազմակերպություններին կից ճաշարանների ծառայություններ.
6. հանրակացարանների շահագործում.
7. սպորտի բնագավառի այլ գործունեություն՝

ա) բացօթյա կամ փակ տարածքներում սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում.

բ) սպորտային միջոցառումների կազմակերպման և աջակցման գործունեություն.

12. Քոլեջի գործունեության ընթացքում առաջացած շահույթը (միջոցները) օգտագործվում են սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար, եթե հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

## III. ՔՈԼԵՋԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

13. Քոլեջն ընդունելությունը կատարում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տվյալ ուսումնական տարվա համար հաստատված ընդունելության կանոններին համապատասխան:

14. Քոլեջի ուսումնական գործընթացը կազմակերպվում է երկու կիսամյակից բաղկացած ուսումնական տարով: Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ուսանողներն ատեստավորվում են: Քոլեջում կարող են կիրառվել նաև միջանկյալ ատեստավորման ձևեր:

15. Քոլեջի ուսումնական գործունեությունը կարգավորվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական գործընթացի ժամանակացույցով և դասացուցակներով:

Քոլեջը մշակում և հաստատում է իր ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը՝ Հայաստանի Հանրապետության կրթության և

գիտության նախարարության հետ համաձայնեցված և կամ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հաստատած չափորոշիչներին համապատասխանեցված:

16. Քոլեջում ուսուցումը կարող է կազմակերպվել առկա, հեռակա, հեռավար և դրսեկության ձևերով:

17. Քոլեջը կրթական ծրագրերի առավել արդյունավետ յուրացման նպատակով ուսուցման առաջավոր ձևերի, մեթոդների և միջոցների ընտրությամբ ուսանողների համար ստեղծում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ: Քոլեջի ուսանողների և ունկնդիրների արտադրական պրակտիկան, որպես կանոն, անցկացվում է կազմակերպություններում, հիմնարկներում՝ դրանց և Քոլեջի միջև կնքված պայմանագրերի հիման վրա:

18. Քոլեջում ուսումնական պարապմունքներն իրականացվում են խմբերով, ենթախմբերով, հոսքերով, անհատական՝ հետևյալ հիմնական ձևերով. դաս, դասախոսություն, սեմինար, գործնական աշխատանք, լաբորատոր աշխատանք, ստուգողական աշխատանք, անհատական աշխատանք, ինքնուրույն աշխատանք, խորհրդատվություն, պրակտիկա, կուրսային նախագծում (կուրսային աշխատանք), դիպլոմային նախագծում (դիպլոմային աշխատանք): Քոլեջը կարող է կիրառել նաև ուսումնական պարապմունքների այլ ձևեր (էքսկուրսիա, դերային խաղերի դաս, կոնֆերանս, տնային աշխատանք, պրակտիկում և այլն): Լսարանային պարապմունքների բոլոր ձևերի համար սահմանվում է ակադեմիական ժամ՝ 45 րոպե տևողությամբ, զույգ ժամերի միանվագ վարման դեպքում՝ 80 րոպե:

19. Առկա ուսուցմամբ ուսանողների համար տարեկան առնվազն երկու անգամ սահմանվում են արձակուրդներ 8-11շաբաթ ընդհանուր տևողությամբ, այդ թվում՝ 2 շաբաթից ոչ պակաս ձմռան ժամանակահատվածում:

20. Ուսանողների միջին շաբաթական բեռնվածությունը լսարանային ուսումնական պարապմունքներով որպես կանոն չպետք է գերազանցի 36 ժամը: Ուսումնական պարապմունքների տարբեր ձևերի և արտադրական ուսուցման անցկացման ժամկետները սահմանվում են ուսումնական պլաններով:

Ուսանողների առաջադիմության միջանկյալ ատեստավորման ու ընթացիկ վերահսկողության ձևերը, կարգը և պարբերականությունը սահմանվում են ուսումնական պլաններով:

21. Քոլեջի ուսումնական խմբում ուսանողների թիվը սահմանվում է առկա ուսուցման համար 20-25 հոգի, հեռակա ուսուցման համար՝ 15-20 հոգի, եթե տվյալ մասնագիտության ուսումնական պլանով այլ թիվ նախատեսված չէ:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքում ուսումնական խումբը կարող է բաժանվել ենթախմբերի՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համաձայնությամբ:

22. Ուսումնական պլանի, առարկայական ծրագրերի բոլոր պահանջները կատարած ուսանողներին թույլատրվում է մասնակցել ամփոփիչ ատեստավորմանը, որի դրական արդյունքների հիման վրա նրանց տրվում է համապատասխան որակավորում և պետական նմուշի ավարտական վկայական (դիպլոմ):

Տվյալ կրթական ծրագիրը չավարտածներին տրվում է համապատասխան տեղեկանք:

23. Քոլեջը սահմանված կարգով կարող է իրականացնել նպատակային գիտափորձ և մանկավարժական ծրագիր, կազմակերպել նախապատրաստական,

մասնագետների վերապատրաստման ու որակավորման բարձրացման դասընթացներ:

24. Քոլեջն իր գործունեությունն իրականացնում է համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական, արտադրական և ոչ արտադրական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ, պարբերաբար կազմակերպում է համաժողովներ, գիտաժողովներ, գործնական սեմինարներ, օլիմպիադաներ և այլն:

25. Քոլեջը միջոցներ է ձեռնարկում ուսանողների (ունկնդիրների) ինքնազարգացման, առողջության պահպանման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման և սննդի կազմակերպման համար:

## IV.ՔՈԼԵՋԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

26. Քոլեջի կառավարումն իրականացնում են հիմադիրը, նրա լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), գործադիր մարմինը՝ տնօրենը:

27. Քոլեջի հիմադիրը՝

ա) հիմնադրում է Քոլեջը.

բ) սահմանում է Քոլեջի գործունեության առարկան և նպատակները, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները.

գ) հաստատում է Քոլեջին սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը.

դ) սահմանում է Քոլեջի կառավարման համակարգը.

ե) վերակազմակերպում կամ լուծարում է Քոլեջը.

զ) նշանակում է լուծարման հանձնաժողով և հաստատում է լուծարման հաշվեկշիռը.

է) լուծում է օրենքով և Քոլեջի կանոնադրությամբ նախատեսված այլ հարցեր:

28. Լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝

ա) հաստատում է Քոլեջի կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ

բ) սահմանում է Քոլեջի կառավարման համակարգը.

գ) Քոլեջի կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

դ) հաստատում է Քոլեջին սեփականության իրավունքով հանձնվող (կամ) ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմը.

ե) վերահսկողություն է իրականացնում Քոլեջին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ) իրականացնում է քոլեջի գործունեության վերահսկողությունը.

է) նշանակում է Քոլեջի լուծարման հանձնաժողով և հաստատում է լուծարման հաշվեկշիռը.

ը) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Քոլեջի տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

բ) լսում է Քոլեջի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության վերաստուգման արդյունքները.

ժ) վերահսկողություն է իրականացնում Քոլեջի սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ Քոլեջի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

ի) հաստատում է Քոլեջի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, եթե Քոլեջը չունի կոլեգիալ կառավարման մարմին.

լ) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և Քոլեջի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

30. Քոլեջի տնօրենը (այսուհետ՝ Տնօրեն), որին աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, իրականացնում է Քոլեջի ընթացիկ գործունեության ղեկավարումը:

31. Տնօրենի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

32. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Քոլեջի անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության որոշումներով ու Քոլեջի կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Քոլեջի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

գ) տալիս է Քոլեջի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

դ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է քոլեջի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ, այդ թվում՝ տարադրամային.

զ) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

է) սահմանում է Քոլեջի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) անհրաժեշտ պայմաններ է ստեղծում մանկավարժական կադրերի մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժ) վերահսկողություն է իրականացնում ուսուցման բովանդակության, ուսանողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, դաստիարակչական աշխատանքի կազմակերպման նկատմամբ.

ժա) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահական կանոնների, սանիտարական նորմերի, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահանջների կատարումը.

ժբ) սահմանված կարգով տարեկան մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն.

ժգ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և Քոլեջի կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

33. Տնօրենի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է տնօրենի տեղակալներից մեկը:

34. Քոլեջի խորհրդակցական մարմինը Քոլեջի տնօրինական խորհուրդն է:

35. Տնօրինական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են տնօրենի տեղակալները, գլխավոր հաշվապահը, ամբիոնների ղեկավարները,կրթական ծրագրերի ղեկավարները:

Տնօրինական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել Քոլեջի այլ աշխատողներ, կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնագետներ: Տնօրինական խորհրդի նախագահը Տնօրենն է :

36. Տնօրինական խորհրդի անհատական կազմը հաստատում է Տնօրենը:

37. Տնօրինական խորհուրդը՝

ա) Տնօրենին ներկայացնում է առաջարկություններ Քոլեջի գործունեության հիմնական ուղղությունների մասին.

բ) քննարկում է Քոլեջի զարգացման ծրագիրը, ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանը և դրա կատարման տարեվերջյան արդյունքները.

գ) քննարկում է Քոլեջի ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի նախագծերը և առաջարկություններ է ներկայացնում Տնօրենին.

դ) հաստատում է իր աշխատակարգը.

ե) ընտրում է տնօրինական խորհրդի նախագահի տեղակալին (տեղակալներին) և քարտուղարին.

զ) Տնօրենին ներկայացնում է առաջարկություններ Քոլեջի տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ.

է) քննարկում է Քոլեջի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը և առաջարկություններ է ներկայացնում տնօրենին.

ը) քննարկում է Տնօրենի, նրա տեղակալների հաղորդումները, մյուս աշխատողների հաշվետվություններն ու հաղորդումները ու առաջարկություններ է ներկայացնում Տնօրենին.

թ) քննարկում և Տնօրենին առաջարկություններ է ներկայացնում Քոլեջի կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին.

ժ) Տնօրենին ներկայացնում է առաջարկություն մեկ ուսանողի համար ուսման վարձավճարի չափի վերաբերյալ.

ժա) քննարկում և Տնօրենին առաջարկում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները.

ժբ) քննարկում է Քոլեջի աշխատողների ատեստավորման արդյունքները և առաջարկություններ է ներկայացնում Տնօրենին.

ժգ) իրականացնում է սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

38. Տնօրինման խորհրդի նիստերը գումարվում են խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև անդամների 1/3-ի պահանջով: Տնօրինական խորհրդի նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և կարգով, սակայն ոչ պակաս, քան տարեկան վեց անգամ:

39. Ուսանողների կրթության և դաստիարակության որակի կատարելագործման, մեթոդական աշխատանքների, դասախոսների մանկավարժական վարպետության բարձրացման, ինչպես նաև առաջավոր փորձի կիրառման նպատակով Քոլեջում սահմանված կարգով ստեղծվում են ամբիոններ, ուսումնամեթոդական, գիտամեթոդական, մանկավարժական խորհուրդներ, որոնք գործում են Տնօրենի հաստատած կանոնակարգով:

40. Քոլեջում գործավարությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

41. Միջին մասնագիտական կամ այլ կրթական ծրագրի իրականացման որակի նկատմամբ պետական վերահսկողությունը, հաստատության տեսչական ստուգումը, պետական ատեստավորումը և հավատագրումն իրականացնում է լիազորված մարմինը:

42. Քոլեջի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության, նրա կանոնադրության պահանջների կատարման, կրթական ու ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, հիմադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

## V.ՔՈԼԵՋԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

43. Քոլեջի աշխատողներն իրավունք ունեն՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու Քոլեջի կառավարմանը.

բ) պետական կրթական ընդհանուր չափորոշիչների շրջանակներում ընտրելու և օգտագործելու կրթական գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ ուսուցման ու դաստիարակության մեթոդիկաներ, ուսումնական ձեռնարկներ և նյութեր, գիտելիքների գնահատման մեթոդներ (մանկավարժական աշխատողները).

գ) սահմանված կարգով օգտվելու հաստատության տեղեկատվական ֆոնդից, ուսումնական, գիտական, սոցիալ-կենցաղային, բուժական և այլ ծառայություններից, տեխնիկական հնարավորություններից.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու հաստատության ղեկավարության հրամանները (կարգադրությունները):

Աշխատողն ունի նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, աշխատանքային պայմանագրով, հաստատության կանոնադրությամբ չարգելված այլ իրավունքներ:

44. Քոլեջի աշխատողը պարտավոր է

ա) կատարել Քոլեջի կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահության կանոնները.

բ) բարեխղճորեն կատարել իր աշխատանքային պարտականությունները.

գ) ապահովել իր գործունեության պատշաճ մասնագիտական մակարդակը:

45. Քոլեջի թափուր մանկավարժական աշխատատեղերի համար Խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել մրցութային ընտրություն:

46. Քոլեջի մանկավարժները և այլ աշխատողներն իրենց մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման նպատակով սահմանված կարգով պարբերաբար վերապատրաստվում են: Տնօրենը պատասխանատվություն է կրում մանկավարժների և այլ աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման համար:

## VI.ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԵՎ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԸ

47. Քոլեջի ուսանողը տնօրենի հրամանով միջին մասնագիտական կրթական ծրագրեր յուրացնելու համար տնօրենի հրամանով ընդունված անձն է:

48. Քոլեջի ունկնդիրը Տնօրենի հրամանով նախապատրաստական դասընթացներում, մասնագետների որակավորման բարձրացման և վերապատրաստման բաժանմունքում սովորելու համար ընդունված անձն է: Ունկնդիրը կրթական ծառայություններ ստանալու մասով օգտվում է ուսանողի իրավունքներից:

49. Քոլեջի ուսանողի իրավունքներն ու պարտականությունները որոշվում են սույն կանոնադրությամբ, ներքին կարգապահության կանոններով:

50. Քոլեջի ուսանողն իրավունք ունի՝

ա) ստանալու կրթություն՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, և ձեռք բերելու գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ.

բ) վճարովի հիմունքով ստանալու երկրորդ մասնագիտություն կամ օգտվելու լրացուցիչ (այդ թվում՝ վճարովի) կրթական ծառայություններից.

գ) մասնակցելու ուսանողական ինքնակառավարման մարմինների, խմբակների, ակումբների ստեղծմանը և դրանց աշխատանքներին.

դ) անվճար օգտվելու հաստատության գրադարանից, տեխնիկական միջոցներից.

ե) մասնակցելու Քոլեջի գիտահետազոտական, նախագծային աշխատանքների կատարմանը.

զ) մասնակցելու Քոլեջի կարևորագույն հարցերի քննարկմանն ու լուծմանը.

է) սահմանված կարգով ստանալու պետական կամ այլ կրթաթոշակ:

51. Քոլեջի անվճար հիմունքով ուսանողը սահմանված կարգով ստանում է պետական կրթաթոշակ:

52. Քոլեջի ուսանողը պարտավոր է՝

ա) կատարել սույն կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահության կանոնները.

բ) խնամքով վերաբերվել Քոլեջի գույքին.

գ) հարգել աշխատողների և ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը.

դ) սահմանված կարգով վճարել ուսման վարձը

ե) կատարել միջին մասնագիտական կրթության ծրագրերի պահանջները:

53. Ուսանողների համար Քոլեջի կողմից սահմանվում են նյութական ու բարոյական խրախուսման ձևեր:

54. Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի պահանջները չկատարելու, սույն կանոնադրությամբ նախատեսված պարտականությունները, ներքին կարգապահական կանոնները խախտելու համար ուսանողների նկատմամբ կարող են կիրառել կարգապահական ներգործության միջոցներ՝ ընդհուպ Քոլեջից հեռացումը:

55. Քոլեջն ուսանողին տեղեկատվություն է տրամադրում տվյալ ոլորտում զբաղվածության վիճակի մասին:

## VII.ՔՈԼԵՋԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

56. Քոլեջի սեփականությունը ձևավորվում է Քոլեջի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Քոլեջի գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

57. Քոլեջն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու,

տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

58. Հիմադիրը Քոլեջին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ Քոլեջի լուծարումից հետո մնացած գույքի:

59. Քոլեջի սեփականության պահպանման հոգսը կրում է Քոլեջը:

60 .Քոլեջի սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

61. Հիմնադիրը կարող է Քոլեջին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

62. Հիմնադիրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հետ վերցնել իր կողմից Քոլեջին ամրացված գույքը:

63. Քոլեջը իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման, առանց հիմնադրի համապատասխան որոշման:

Քոլեջն իրավունք ունի իրեն ամրացված գույքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված պետական մարմնի համաձայնությամբ հանձնել վարձակալության: Վարձակալության հանձնելիս ստացված վարձավճարները ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Քոլեջի ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

64. Հիմնադրի կողմից գույքը Քոլեջին ամրացնելը չի կարող հիմք հանդիսանալ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

65. Հիմնադրի կողմից հասատատությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ հաստատության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

## VIII.ՔՈԼԵՋԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

66. Քոլեջի հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարվում են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

67. Քոլեջը ֆինանսավորումը է հիմնադիրը: Քոլեջի ֆինանսական միջոցները գոյանում են բյուջետային և լրացուցիչ աղբյուրներից:

68. Քոլեջի լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրներն են՝

ա) լիազորված պետական մարմնի սահմանված կարգով վճարովի կրթական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.

բ) բարեգործական, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ) սույն կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտները:

69. Քոլեջն իր միջոցների հաշվին աշխատողների աշխատավարձի նկատմամբ կարող է կիրառել հավելումներ:

70. Քոլեջը ֆինանսական գործունեության մասին սահմանված կարգով հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

71. Քոլեջը հիմնադրի կողմից սահմանված կարգով հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

72. Քոլեջի գործունեության տարեկան ֆիանանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից:

## IX.ՔՈԼԵՋԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

73. Քոլեջը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Քոլեջը կարող է վերակազմակերպվել 100% պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:

Քոլեջը դատական կարգով կարող է վերակազմավորվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

74. Քոլեջի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով անձանց անցնելու:

75. Քոլեջը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Քոլեջը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

76. Քոլեջը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

77. Քոլեջի լուծարման դեպքում հաստատության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է ՀՀ պետական բյուջե: